

Քարտից անվտանգ օգտվելու**ՈՒՂԵՑՈՒՅՑ**

1. Երբեք **ՄԻ՝ ՏՐԱՄԱԴՐԵՔ** Ձեր քարտը, PIN կոդը և քարտի վրա առկա վավերապայմանները (քարտի համար, ժամկետ, CVV2 կոդ) որևէ այլ անձին: Քարտը և ՊԻՆ կոդը անհրաժեշտ է պահպանել տարբեր տեղերում:
2. **ՄԻ՝ ՀՐԱՊԱՐԱԿԵՔ** Ձեր քարտի լուսանկարը սոցիալական ցանցերում:
3. Քարտը ստանալուց անմիջապես հետո **ՍՏՈՐԱԳՐԵՔ** քարտի դարձերեսի համապատասխան մասում:
4. Ինտերնետային գործարքների համար ցանկալի է ունենալ առանձին քարտ՝ սահմանափակ գումարով:
5. Քարտը ցանկացած կայքում գրանցելուց առաջ անհրաժեշտ է ուշադիր կարդալ կայքի կանոնները և վճարման պայմանները՝ հետագայում ամսական բաժանորդավճարներից խուսափելու նպատակով:
6. Խանութներում կամ ռեստորաններում քարտով վճարում իրականացնելիս պահանջեք, որպեսզի POS տերմինալը բերեն Ձեզ մոտ, հակառակ դեպքում Դուք մոտեցեք POS տերմինալին: **ՄԻ՝ ՎՍՏԱՀԵՔ** Ձեր քարտը մատուցողին: Գործարքի ընթացքում քարտը միշտ պահեք Ձեր տեսադաշտում:
7. Բանկոմատից գումար հանելու ընթացքում **ՈՒՇԱԴԻՐ ԵՂԵՔ** քարտի և գումարի տրամադրման հերթականությանը: Որոշ բանկոմատներ առաջինը տրամադրում են քարտը, որից հետո միայն՝ գումարը:
8. Բանկոմատից գումար ստանալու ընթացքում ձախ ձեռքով ծածկեք ստեղնաշարը՝ անկախ մոտակայքում այլ անձանց գտնվելու փաստից: Դա կպաշտպանի Ձեր PIN կոդը ապօրինի նկարահանումներից:
9. Քարտային հաշվին կարող եք ակտիվացնել SMS ծառայությունը՝ քարտային հաշիվների ելքերը կառավարելու և անհրաժեշտության դեպքում քարտը արագ բլոկավորելու նպատակով: Քարտերի բլոկավորման համար նախատեսված շուրջօրյա հեռախոսահամարն է 59-23-23:
10. Գրանցեք Ձեր էլեկտրոնային փոստը ցանկացած մասնաճյուղում ամսական քաղվածքները էլեկտրոնային եղանակով ստանալու նպատակով:
11. Գրանցեք վիրտուալ քարտ www.arca.am կայքում և պարբերաբար հետևեք քարտի ընթացիկ շարժին և մնացորդին:
12. Քարտը կորցնելու դեպքում անմիջապես բլոկավորեք այն՝ 59-22-22, 59-23-23 հեռախոսահամարով:
13. Արտասահմանում քարտը կորցնելու դեպքում, բացի հեռախոսով քարտը բլոկավորելուց, հնարավոր է, անհրաժեշտություն ծագի քարտը տեղադրել նաև միջազգային բլոկավորման համակարգ՝ առանց հավաստագրման գործարքներից խուսափելու նպատակով: Հետևեք Ձեր հաշվի շարժին www.arca.am կայքի միջոցով,

Ձեր կողմից չկատարված գործարքի առկայության դեպքում անմիջապես զանգահարեք 59-22-22 հեռախոսահամարով :

14. Քարտի ժամկետի ավարտին քարտը պարտադիր վերադարձրեք ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ցանկացած մասնաճյուղ: